ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/277

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Մասնակից՝ «Գարդիան» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչ՝ Ք. Մաիլյանի
«Գարդիան» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Գևորգյանի, ներկայացուցիչ՝ Վ. Պապյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցում, անվտանգության ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18428-2020 գրությամբ «Գարդիան» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 08.12.2020թ.-ի թիվ ՍՄ//64859-2020 գրության հիման վրա, 11.12.2020թ.-ին «Գարդիան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 11.12.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 14.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/277 համարի ծածկագիրը:

18.12.2020թ.-ին և 29.12.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 18.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.12.2020թ.-ին:

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 08.12.2020թ.-ի թիվ ՍՄ//64859-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իր ենթակայությանը հանձնված «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2021 թվականի կարիքների բավարարման նպատակով ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-21/7 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակագի շրջանակներում հայտ էր ներկայացրել նաև ԳԱՐԴԻԱՆ ՍՊԸ-ն, որը 03.12.2020 թվականին գրավոր հրաժարվել է գնման ընթացակարգին հետագա մասնակցությունից:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Գարդիան» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Գարդիան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 14.12.2020թ.-ին գրությամբ դիմել է «Գարդիան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18428-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին նաև ներկայացրել է գրավոր դիրքորուշում, հայտնելով հետևյալը.

«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 25.11.2020թ.-ին հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման հրավերին մասնակցելուց հրաժարվելու հիմքը կայացել է հետևյալում՝ «ԳԱՐԴԻԱՆ» ՍՊ ընկերության գնային առաջարկում եղել է վրիպակ, ոչ դիտավորությամբ ներկայացվել է 1/մեկ/ ամսվա հաշվարկված արժեք 1/մեկ/ տարվա փոխարեն, ուստի, ելնելով վերոգրյալից հայցում ենք Ձեր ներողամտությունը, և եթե հնարավոր է շարունակել մեր մասնակցությունը վերոնշյալ մրցույթին, ապա կներկայացնենք 1 /մեկ/ տարվա գնային առաջարկի արժեքը:»:

4. <u>ՍՑ-LO-2020/277 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից անվտանգության ծառայությունների ձեռքբերման նպատակով 18.11.2020թ.-ին հայտարարվել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Գարդիան» ՍՊԸ-ն:

ii. «Գարդիան» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iii. 01.12.2020թ.-ին «Գարդիան» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ Ընկերությունը «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման հրավերին մասնակցելու ընթացքում ներկայացված գնային առաջարկի մեջ ոչ դիտավորությամբ, թյուրիմացաբար 1/մեկ/ տարվա փոխարեն ներկայացրել է 1/մեկ/ ամսվա անվտանգության ծառայությունների մատուցման արժեք: Ելնելով վերոնշվածից հրաժարվել է մրցույթին հետագա մասնակցությունից և խնդրել է ներողամիտ գտնվել ու անվավեր ճանաչել ընկերության մասնակցությունը:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 02.12.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Գարդիան» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել, որ հրաժարվում է գնման հետագա գործընթացին մասնակցությունից:

v. Հանձնաժողովի 04.12.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մերժել մասնակցի հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18428-2020 գրությամբ «Գարդիան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե մասնակիցը հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից անվտանգության ծառայությունների ձեռքբերման նպատակով 18.11.2020թ.-ին հայտարարված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Գարդիան» ՍՊԸ-ն 01.12.2020թ.-ին գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ Ընկերությունը «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման հրավերին մասնակցելու ընթացքում ներկայացված գնային առաջարկի մեջ ոչ դիտավորությամբ, թյուրիմացաբար 1/մեկ/ տարվա փոխարեն ներկայացրել է 1/մեկ/ ամսվա անվտանգության ծառայությունների մատուցման

արժեք: Ելնելով վերոնշվածից հրաժարվել է մրցույթին հետագա մասնակցությունից և խնդրել է ներողամիտ գտնվել ու անվավեր ճանաչել ընկերության մասնակցությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գարդիան» ՍՊԸ-ի վերոնշյալ գրությունը որոշել է մերժել մասնակցի հայտը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Գարդիան» ՍՊԸ-ն Հանձնաժողովին ուղղված գրությամբ, հայտերը բացելուց հետո, հրաժարվելով «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնման գործընթացի հետագա մասնակցությունից, ըստ էության, հրաժարվել է ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելուց:

Անդրադառնալով սույն գործի քննության ընթացքում Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերին ու հանգամանքներին, մասնավորապես՝ 15.12.2020թ.-ին Բողոքներ քննող անձին ուղղված գրությանը, Մասնակցի աշխատակից Ա. Կարապետյանի բացատրագրին և դրա կից նյութերին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից: Ուստի, այն դեպքերում, երբ հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելու արդյունքում բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ

հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի և վերջինիս աշխատակից Ա. Կարապետյանի միջև 01.06.2017թ.-ին կնքված աշխատանքային պայմանագրով չի հիմնավորվում, որ վերջինս հանդիսանում է ընկերության գնումների գործընթացով զբաղվող պատասխանատու աշխատակիցը, ում բացակայության պայմաններում հնարավոր չէր գնման հայտը ներկայացնել առանց թերությունների:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ սույն գործի քննության ընթացքում Մասնակցի կողմից չներկայացվեց որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց առ այն, որ գնման հայտ ներկայացնելը եղել միայն Ա. Կարապետյանի իրավասությունը կամ աշխատանքային պարտականությունը, որի արդյունքում հնարավոր կլիներ փաստել Մասնակցի կողմից թույլ տված խախտման՝ վերջինիս կամքից անկախ հիմքերի պատճառների առկայությունը:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Հատկանշական է նաև, որ Մասնակցի աշխատակցի բացակայությունը պայմանավորված չի եղել օբյեկտիվ հանգամանքներով, որոնց առկայության դեպքում

հնարավոր կլիներ սույն գործի քննության ընթացքում դիտարկել վերջինիս բացակայության և Մասնակցի կողմից ներկայացված հայտի թերությունների պատճառահետևանքային կապը: Մասնակցի կողմից, այնուամենայնիվ, Ա. Կարապետյանի բացակայության պայմաններում ներկայացվել է հայտ, սակայն հայտում նշվել է ծառայության մատուցման միավոր արժեք, որպիսի պայմաններում՝ գործում առկա Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերով, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Մասնակցի կողմից սխալ գնային առաջարկ ներկայացնելը չի կարող ունենալ որևէ պատճառահետևանքային կապ:

«Գարդիան» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգին և Հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Մասնակիցը նաև հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գարդիան» ՍՊԸ-ն Հանձնաժողովին ուղղված գրությամբ, հայտերը բացելուց հետո, հրաժարվելով «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-21/7» ծածկագրով գնման գործընթացի հետագա մասնակցությունից, ըստ էության, հրաժարվել է նաև ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունները կատարելուց:

Ուստի, նման պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18428-2020 գրությամբ «Գարդիան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/277 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Գարդիան» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**